Տասներկուերորդ հաղորդում

Ապրել հաղթական կյանքով՝ կյանքում թագավորելով, որպեսզի դառնանք Նոր Երուսաղեմը՝ որպես կյանքի քաղաքը

Գրվածքների ընթերցում. Հռմ 5:10, 17, 21, 14:17-18, Մրկ 4:26-29, Ղկս 17:21, Մտթ 24:14

I. Իսկական քրիստոնեական կյանքը հաղթողի կյանք է, իսկ Նոր Կտակարանում եղող բոլոր հաղթողները պետք է թագավորներ լինեն, որոնք ստացել են շնորհքի ու արդարության շնորհի առատությունը, որպեսզի կյանքում թագավորեն՝ Հռմ 5:17.

Ա. Որպես Աստծու սահմանած մարգարեներ ու քահանաներ՝ մենք նաև թագավորներ ենք, որպեսզի Աստծուն թույլ տանք իշխել մեր մեջ ու մեր միջոցով Իր բոլոր թշնամիների վրա. Նոր Կտակարանում հավատացյալները պետք է լինեն թագավորների, քահանաների ու մարգարեների նախատիպերի կատարումն Աստծու տնտեսության մեջ.

1. Նոր Կտակարանում բոլոր հավատացյալները փրկված են, որպեսզի թագավորներ ու քահանաներ լինեն. երբ քահանաները խոսում են Աստծու անունից, դառնում են Աստծու պատգամախոսները, Աստծու խոսափողը. և սրանք մարգարեներ են՝ Ա Պտ 2:5, 9, Հյտ 1:6, 20:6, 22:3-5, Ա Կրթ 14:12, 24-25, 31:
2. Մարգարեանալը (Քրիստոսին մարդկանց մեջ ներդնելով խոսելը) մեզ հաղթողներ է դարձնում. մարգարեանալը հաղթողների գործառույթն է՝ խ. 4բ, Ա Պտ 4:10-11, Գրծ 5:20 և ծթգ 2:

Բ. Եթե մեր քրիստոնեական կյանքում չենք հասել թագավորի մակարդակին, դեռևս պատշաճ չափանիշից ցածր ենք. մենք կարող ենք ասել, թե վայելում ենք Քրիստոսին, բայց ի՞նչ աստիճանի, ի՞նչ չափով ենք վայելում Քրիստոսին:

Գ. Քրիստոսին մեր վայելելը կարող է ընդամենը «մի դյույմ բարձրություն» ունենալ, բայց Քրիստոսն անսահմանափակ է. Քրիստոսին մեր վայելելը պետք է թագավորման մակարդակի հասնի. մենք պետք է ստանանք շնորհք շնորհքի վրա այն աստիճանի, որ շնորհքը թագավորի մեր մեջ, ինչը մեզ թույլ կտա Աստծու տարատեսակ շնորհքի լավ տնտեսվարներ լինել՝ Փլպ 3:13, Հվհ 1:16, Հռմ 5:21, Ա Պտ 4:10, Եփս 3:2:

Դ. Աստծու ավարտուն փրկությունն այն է, որ մենք փրկվենք Քրիստոսի կյանքում և թագավորենք այս կյանքում շնորհքի ու արդարության շնորհի առատության շնորհիվ (Հռմ 5:10, 17, 21). արդարության շնորհն Աստծու՝ մեր հանդեպ գործնական կերպով կիրառված իրավական փրկագնումն է. շնորհքն Աստված Ինքն է՝ որպես մեր համաբավարար մատակարարումը մեր օրգանական փրկության համար:

II. Հայտնությունը՝ Աստվածաշնչի վերջին գիրքը, հաղթողներին վերաբերող գիրք է. 2 և 3-րդ գլուխներում Տերը մեզ՝ Իր հավատացյալներին, մեր մեծ

հայր Աբրահամի հոգևոր հետևորդներին, յոթնապատիկ կանչ է ուղղում՝ լինելու Իր հաղթողները (2:7, 11, 17, 26, 3:5, 12, 21)՝ նրանք, ովքեր հաղթում են սատանայական ողջ քաոսին (հմմտ Կղս 1:17բ, 18բ, 10) ու հաղթանակում աստվածային տնտեսության մեջ (Հռմ 8:37, Բ Կրթ 2:14).

Ա. Աստծու տեսանկյունից մարդկանց չորս հիմնական ցեղ կա՝ Ադամի ցեղը, Աբրահամի ցեղն ըստ մսեղիի (Ծնդ 13:16), Աբրահամի ցեղն ըստ Հոգու (15:5, Գղտ 3:7, 29) և հաղթողների ցեղը. մենք, հավատքի մեր հոգին վարժելով, պետք է ազդարարենք, որ պատկանում ենք հաղթողների ցեղին (Բ Կրթ 4:13):

Բ. Հայտնության գիրքը մեզ ցույց է տալիս, որ առանց հաղթողների՝ Քրիստոսը վերադառնալու միջոց չունի. մենք գիտենք, որ Քրիստոսը մեր ճանապարհն է (Հվի 14:6ա), բայց Քրիստոսն Իր սրտի խորքից հաղթողներին կասեր, որ նրանք Իր ճանապարհն են. հաղթողները հենց այն ճանապարհն են, որի շնորհիվ Քրիստոսը կարող է վերադառնալ (Հյտ 19:7-9, Սղմ 45:13-14):

Գ. Թող Աստված օրհնի ձեզ՝ ձեզ այսօր հաղթողներ դարձնելով, որոնք ապրում են մի կյանքով, որը թագավորում է. այս եզակի օրհնությունը Եռամեկ Աստծու հավիտենական օրհնությունն է, ով Իրեն բաշխում է մեր մեջ մեր վայելքի համար՝ Թվց 6:22-27, Բ Կրթ 13:14, Եփս 1:3, Գղտ 3:14:

III. Որպեսզի կյանքում թագավորենք՝ դառնալով Տիրոջ հաղթողները, մենք պետք է տեսնենք, որ վերածնվել ենք աստվածային, հոգևոր, երկնային, արքայավայել և թագավորական կյանքով. Տերն ասաց. «Աստծու թագավորությունն այսպես է. որպես թե մի մարդ հողի վրա սերմ գցի»՝ Մրկ 4:26, Ա Հվի 3:9.

Ա. Այս սերմն աստվածային կյանքի սերմն է (խ. 9, Ա Պտ 1:23), որը սերմանվում է հավատացյալների մեջ, ինչը ցույց է տալիս, որ Աստծու թագավորությունը, որը Տիրոջ ավետարանի արդյունքն ու նպատակն է, և եկեղեցին այս դարաշրջանում (Հռմ 14:17), կյանքի հետ են կապված՝ Աստծու կյանքի, որը ծլարձակում, աճում, պտղաբերում, հասունանում և բերք է տալիս (Ա Կրթ 3:6-9, Հյտ 14:4, 15-16):

Բ. Աստծու թագավորությունը Քրիստոսն Ինքն է (Ղկս 17:21). որպես մարդկայնության մեջ եղող Եռամեկ Աստված (Կղս 2:9)՝ Նա Աստծու թագավորության սերմը՝ «գենն» է, որը սերմանվում է Աստծու ընտրյալ մարդկանց մեջ, որպեսզի աճի նրանց մեջ, ապրի նրանց մեջ և արտահայտվի նրանց ներսից ու զարգանալով՝ Աստծու կառավարման ոլորտը դառնա (Մրկ 4:26-29, Ա Կրթ 3:9):

Գ. Նոր Կտակարանի ամբողջ ուսմունքի խորքային տարրն այն է, որ Եռամեկ Աստված մարմնացել է, որպեսզի սերմանվի Իր ընտրյալ մարդկանց մեջ ու զարգանա նրանց մեջ՝ թագավորություն դառնալով. Աստծու նպատակն Աստծու թագավորության լիակատար զարգացումն է.

1. Ավետարաններում տեղի է ունենում թագավորության սերմի՝ գենի սերմանվելը՝ Մրկ 4:3, 14, Մտթ 9:35:
2. Գործքում տեսնում ենք այս սերմանելու վերարտադրությունն ու տարածումը հազարավոր սերմանողների կողմից, որոնք ստացել էին թագավորության սերմը՝ գենը՝ 6:7, 12:24, 19:20:
3. Թղթերում տեսնում ենք թագավորության սերմի՝ գենի աճելը՝ Ա Կրթ 3:6, 9բ, Բ Պտ 1:3, 11:
4. Այս սերմի հունձքը Հայտնության գրքում է, որտեղ հնձվում են երախայրին ու հունձքը՝ 14:4, 15-16, Մրկ 4:29, Մտթ 13:39:
5. Հազարամյա թագավորությունը լինելու է թագավորության սերմի՝ գենի լիարժեք զարգացումը, որտեղ Որդին լինելու է Թագավոր, իսկ բոլոր հաղթողները լինելու են համաթագավորներ՝ «թագավորության գենն ունեցող մարդիկ»՝ Հյտ 20:6:
6. Նոր Երուսաղեմը՝ Աստծու հավիտենական թագավորությունը, չորս Ավետարաններում Նազարեթցի Հիսուսի սերմանած թագավորության սերմի՝ գենի ամենալիարժեք զարգացումն է՝ Հյտ 21:2, 22:1, 3, 5, 5:10, 3:12, 11:15, 19:6, 20:6, Սղմ 146:10:
7. Մենք պետք է մեկ լինենք Տիրոջ հետ, որպեսզի թագավորության ավետարանը քարոզենք ամբողջ բնակեցված երկրին թագավորության սերմի՝ գենի վերարտադրության ու տարածման համար՝ այս դարաշրջանն ավարտելու նպատակով՝ Մտթ 24:14:

IV. Փորձառության տեսանկյունից կյանքում թագավորել նշանակում է աստվածային կյանքի կառավարման տակ լինել.

Ա. Քրիստոսը կյանքում թագավորելու նմուշ է՝ լինելով Հոր աստվածային կյանքի կառավարման ներքո՝ հմմտ 8:5-13:

Բ. Պողոսը օրինակն է մեկի, ով իր կյանքում և սպասավորության մեջ աստվածային կյանքի կառավարման ներքո էր՝ Բ Կրթ 2:12-14:

Գ. Բոլոր հավատացյալներին, որոնք ստացել են շնորհքի և արդարության շնորհի առատությունը, անհրաժեշտ է կիրարկել զսպումն ու սահմանափակումն աստվածային կյանքում. թագավորության կառավարման ներքո եղող կյանքը Սուրբ Հոգում եղող արդարության, խաղաղության և ուրախության կյանք է. այսկերպ ապրել նշանակում է ծառայել Քրիստոսին որպես ստրուկներ, և այսպիսի կյանքը հաճելի է Աստծուն և արժանանում է մարդկանց հավանությանը՝ Հռմ 14:17-18, հմմտ Ա Կրթ 12:3:

V. Երկրորդ Օրինացը բացահայտում է, որ պատշաճ թագավորը պետք է նախ խրատվեր, կառավարվեր, ղեկավարվեր ու վերահսկվեր Աստծու խոսքով (17:14-15, 18-20). նույն սկզբունքն այսօր պետք է կիրառվի եկեղեցիներում երեցների հանդեպ և մեզ բոլորիս, որոնք ձգտում են կյանքում թագավորելուն (Բ Տմթ 3:14-17).

Ա. Եկեղեցին կառավարելու, դրա գործերը վարելու համար երեցները պետք է վերակազմվեն Աստծու խոսքով (Ա Տմթ 3:2, 5:17). արդյունքում

նրանք կլինեն Աստծու կառավարության, Աստծու ղեկավարման ու վերահսկողության ներքո:

Բ. Այդժամ ինքնաբերաբար Աստված կլինի նրանց որոշումներում, և երեցները կներկայացնեն Աստծուն՝ եկեղեցու գործերը վարելիս. այսպիսի վարումը աստվածավարությունն է:

Գ. Օգտագործելով Եզրասին և Նեեմիային որպես առաջնորդների՝ Աստված ընդհանրականորեն փոխեց Իսրայելի վերադարձած ժողովրդի կազմությունը՝ Իրեն Իր խոսքի միջոցով նրանց կազմությունը դարձնելով, որպեսզի նրանք դառնան մի ժողովուրդ, որն Աստծու վկայությունն է. Աստծու ժողովրդին վերակազմել նշանակում է նրանց ուսուցանել՝ նրանց զետեղելով Աստծու Խոսքի մեջ, որպեսզի նրանք հագենան խոսքով՝ Նեմ 8:1-18:

Դ. Աստծու խոսքը մեկ է Հոգու հետ (Հվի 6:63, Եփս 6:17). աստվածային Խոսքի մեր ամենօրյա ընթերցման միջոցով Աստծու խոսքն աշխատում է մեր ներսում, և Հոգին խոսքի միջոցով ինքնաբերաբար մեր էության մեջ է բաշխում Աստծու բնությունը՝ Աստծու տարրով հանդերձ, մեզ Աստծով վերակազմվել տալով:

VI. Որպեսզի կյանքում թագավորենք, մենք պետք է նաև լինենք Հոգու կառավարման ներքո. Հովսեփի կյանքի մասին գրառումը հայտնություն է Հոգու կառավարման մասին, որովհետև Հոգու կառավարումը հասուն սրբի թագավորող տեսանկյուն է. դա կյանքում թագավորելու կյանք է՝ լինելով աստվածային կյանքի զսպման և սահմանափակման ներքո Աստծու թագավորության իրականության մեջ. և դա ավելի բարձր է, քան Հոգու ցանկացած այլ տեսանկյուն՝ Հռմ 5:17, 21, 14:17-18, Ա Կրթ 2:15-16, Բ Կրթ 2:13-14, 3:17-18, Բ Տմթ 4:22, Հյտ 4:1-3.

Ա. Հովսեփը՝ «գլխավոր երազ տեսնողը» (Ծնդ 37:19), երազում տեսավ, որ, Աստծու տեսանկյունից, Նրա մարդիկ կյանքով լի ցորենի որաներ են և լույսով լի երկնային մարմիններ (խխ. 5-11). Հովսեփի երկու երազները (խխ. 7-9), որոնք Աստծուց էին, նրա համար բացահայտեցին Աստծու աստվածային տեսանկյունը երկրի վրա եղող Աստծու մարդկանց բնության, դիրքի, գործառույթի և նպատակի վերաբերյալ:

Բ. Հովսեփի երազները կառավարում էին նրա կյանքը և ուղղորդում նրա վարքը. նա այդքան գերազանց ու սքանչելի կերպով էր վարվում, որովհետև ուղղորդվում էր այն տեսությամբ, որ տեսել էր իր երազներում (հմմտ Գրծ 26:19). նրա եղբայրներն ազատություն էին տալիս իրենց բարկությանը (Ծնդ 37:18-31) և հագուրդ էին տալիս իրենց տենչանքներին (38:15-18), բայց Հովսեփը ճնշում էր իր բարկությունը և հաղթահարում իր տենչանքները (39:7-23)՝ վարվելով որպես կյանքով լի որա և իրեն պահելով որպես խավարում շողացող երկնային աստղ:

Գ. Հովսեփի՝ երկնային տեսության ներքո եղող կյանքը երկինքների թագավորության կյանք էր, որը նկարագրված է Մտթ 5–7-րդ գլուխներում. այսպիսի կյանք ապրելով՝ նա լիովին պատրաստվեց, որպեսզի թագա-

վորի որպես թագավոր. Մատթեոսի Ավետարանի այս գլուխներում բացահայտված երկնային թագավորության սահմանադրության համաձայն՝ մեր բարկությունը պետք է ճնշվի, և մեր տենչանքը պետք է պարտվի (5:21-32):

Դ. Որպես հասուն կյանքի թագավորող տեսանկյան ներկայացուցիչը՝ Հովսեփը վայելում էր Տիրոջ ներկայությունը և դրա հետ մեկտեղ՝ Տիրոջ իշխանությունը, բարգավաճումն ու օրհնությունը՝ Ծնդ 39:2-5, 21, 23, Գրծ 7:9:

Ե. Թեև Հովսեփն իր եղբայրների հանդեպ լի էր մարդկային զգացմունքներով և հույզերով, նա, իր բոլոր զգացմունքներով հանդերձ, մնում էր Հոգու կառավարման տակ. նա իրեն ուրացավ և լիովին Աստծու գերիշխան կառավարմանը ենթարկվեց՝ գործելով բացառապես Աստծու և Նրա ժողովրդի շահերի համար՝ Ծնդ 42:9, 24, 43:30-31, 45:1-2, 24:

Զ. Հովսեփը կենդանի լուսաբանումն է այն բանի, ինչ բացահայտված է Նոր Կտակարանում. նա ինքնուրաց մարդ էր, որը սեփական շահ, սեփական վայելք, սեփական զգացմունքներ, սեփական փառասիրական ձգտումներ և սեփական նպատակներ չուներ. ամեն ինչ Աստծու համար էր և Աստծու ժողովրդի համար: Հովսեփի՝ իրեն ուրանալը և Աստծու գերիշխան ձեռքի տակ սահմանափակումների ենթարկվելը թագավորության կյանքը կիրարկելու բանալին էր՝ Ծնդ 45:24, Մտթ 16:24, Բ Մնց 1:10, Եսյ 30:15ա, Փլպ 1:9, Ա Տմթ 5:1-2, Ա Թսղ 3:12, 4:9, Բ Թսղ 1:3, Հռմ 12:10, Ա Հվհ 4:9, Եբր 13:1:

Է. Հովսեփը գիտակցում էր, որ Աստված էր իրեն Եգիպտոս ուղարկել. Ծնդ 50:20-ում նա իր եղբայրներին ասաց. «Թեև դուք իմ դեմ չարություն խորհեցիք, Աստված խորհեց այն բարիք դարձնել» (45:5, 7, 50:19-21, հմմտ 41:51-52). սա Հռմ 8:28-29-ում Պողոսի խոսքերի իրականությունն է. Հովսեփը որպես Աստծուց ընդունեց այն ամենը, ինչ իր եղբայրներն արել էին իր հանդեպ, և նա մխիթարում էր իրեն նեղացրածներին (Ծնդ 45:5-8, 50:15-21). ինչպիսի՜ շնորհք և ի՜նչ գերազանց հոգի ուներ նա:

Ը. Մենք պետք է «աստվածային հեռադիտակ» օգտագործենք, որպեսզի ժամանակի միջով նայենք ու Նոր Երուսաղեմին հայենք, որտեղ կյանքով լի որաներից ու լույսով լի աստղերից բացի ուրիշ ոչինչ չկա. որքան կյանքում հասուն ենք դառնում, այնքան քիչ ենք բացասականորեն խոսում սրբերի կամ եկեղեցու մասին՝ հմմտ 38:27-30, Մտթ 7:1-5, Ա Պտ 3:8-9:

VII. Մենք պետք է տեսնենք կյանքում թագավորելու նպատակն ու հասնենք դրան. երբ թագավորում ենք կյանքում՝ ապրելով աստվածային կյանքի կառավարման ներքո, արդյունքը լինում է Մարմնի իրական ու գործնական կյանքը՝ արտահայտված եկեղեցական կյանքում՝ Հռմ 12:1-4, 9-12, 15-18, 14:1-9, 15:1-13.

Ա. Որպես Քրիստոսին հավատացողներ՝ մենք փոխադրվել ենք Աստծու սիրո Որդու թագավորություն, և եկեղեցական կյանքում սերը գերիշխում

է (Կող 1:12-13). Մարմինն ինքն իրեն կառուցում է սիրո մեջ (Ա Կրթ 8:1, Եփս 1:4, 3:17, 4:2, 15-16, 5:2), և սերը եկեղեցին՝ որպես Քրիստոսի օրգանական Մարմինը, կառուցելու համար ինչ-որ բան լինելու կամ ինչ-որ բան անելու լավագույն ճանապարհն է (Ա Կրթ 12:31բ, 13:4-8ա):

Բ. Եթե չունենք Քրիստոսին՝ որպես սիրո, մեր ամբողջ խոսելը նման է «հնչող պղնձի» ու «զնգացող ծնծղայի», որոնք անկյանք ձայներ են հանում՝ խ. 1:

Գ. Եկեղեցական կյանքը ոստիկանատուն չէ կամ դատարան, այլ սիրո տուն՝ հոգևոր երեխաներին դաստիարակելու համար, հիվանդանոց՝ հիվանդներին բուժելու և վերականգնելու համար, և դպրոց՝ մարդկանց սիրո մեջ սովորեցնելու համար՝ Մտթ 9:12, Բ Կրթ 11:29ա, Հվհ 8:7, 10-11, Ա Կրթ 9:22, Ղկս 15:1-7:

VIII. Երբ թագավորում ենք կյանքում, ներբնակվող Քրիստոսին՝ որպես շնորհքի, թույլ ենք տալիս թագավորել մեր ներսում «առ հավիտենական կյանք». սա կյանքում թագավորելու ավարտունությունն է՝ Եբր 4:16, Հռմ 5:17, 21.

Ա. Հվհ 4:14բ-ում ասվում է. «Այն ջուրը, որ տալու եմ նրան, նրա մեջ ջրի ակունք կդառնա՝ հավիտենական կյանքի մեջ ներբխող»:

Բ. «Ներ» նախածանցը («առ» կապը Հռմ 5:21-ում) խոսում է նշանակետի մասին. հավիտենական կյանքը հոսող Եռամեկ Աստծու նշանակետն է. «ներ» նախածանցը նաև նշանակում է «որպեսզի դառնա» կամ «որպեսզի լինի»:

Գ. Վայելելով հոսող Եռամեկ Աստծուն՝ Հորը՝ որպես կյանքի ակունքի, Որդուն՝ որպես կյանքի աղբյուրի և Հոգուն՝ որպես կյանքի գետի, մենք ստանում ենք շնորհքի առատությունը, որպեսզի դառնանք Նոր Երուսաղեմը՝ որպես Աստծու կյանքի հանրագումարը, կյանքի քաղաքը. այսպիսով՝ կյանքում մեր թագավորելու արդյունքն ու ավարտունությունը պետք է բացառապես ու վերջնականորեն լինի Աստծու հավիտենական տնտեսության նպատակը՝ Նոր Երուսաղեմը:

© 2022 Living Stream Ministry